

## ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ

№ 10

1971

ԷԼԵՊՈՆՈՐԾ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

### ՂՈՒԿԱՍ ԼՈՌԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՔԱՐՈՉԳԻՐՁԸ

Ղուկաս Լոռեցին միջնադարյան այն հեղինակներից է, որոնց կյանքն ու մատենագրական գործունեությունը մինչև այժմ ուշադրության չեն արժանացել<sup>1</sup>: Նա ապրել և ստեղծադրել է XV դ. վերջերին և XVI դ. սկզբներին:

Ծնորչիվ իր մանկավարժական և գրական-ստեղծադրական աշխատանքների, Ղուկասը եղել է իր ժամանակաշրջանի նշանավոր գեմքերից մեկը: Նրա անունը սերտորեն առնշվում է էջմիածնի և Սանահնի գպրոցներին, որ անց է կացրել իր կյանքի շուրջ 30 տարիները:

Ղուկասը հեղինակել է մի շաբթ աշխատություններ, որոնցից, սակայն, մեղքի բան է հասել:

Հայ մատենագրության պատմության մեջ «Ղուկաս վարդապետ» անունով մի շաբթ հեղինակներ են հիշվում, որոնց անձնավորությունն ու գործունեությունը զժվար է տարբերակել: Չեռագրական նյութերի ուսումնասիրությունը հնարավորություն է բնձնում նրանցից դատորոշելու մեր հեղինակին: Այդ ձեռագրերը հիմնականում պարունակում են բարողների մի խումբ, որը բավական շատ է բնդօրինակված: Միայն Մաշտոցյան մատենագարանում այդ բարողները պարունակող շուրջ 50 ձեռագրեր կան, որտեղ, սակայն, չի պահպանվել հեղինակի անունը: Այդ տեսակետից բացառություն է կազմում Երուսաղեմի № 631 գրչագիրը, որի առաջին էջում գրված է. «Յանկ է գրոց, որ կոչի բարողգիրը, զոր արարեալ է վարժապետն Հայոստանեաց Ղուկաս՝ պարզ և աշխարհարառ բառի, որ մտադրութեամբ, ունկընդրութեամբ նա հեշտ ուսանին»<sup>2</sup>: Ե. Պողարյանը, նկարագրելով այդ ձեռագիրը, հիմք բնդունելով այնտեղ եղած տեղեկությունը, վերնադրից անմիջապես հետո որպես հեղինակի նշել է «Ղուկաս վարդապետ» անունը, իր կողմից ավելացնելով «Լոռեցի» մականունը: Նա այս նույնը կրկնել է նաև 1967 և 1968 թթ. հրատարակված Երուսաղեմի հայերեն ձեռագրերի թ և Գ հատորների մեջ, առանց մատնանշելու դրա համար հիմք հանդիսացող հանդամանքները<sup>3</sup>:

Քարողների հեղինակային պատկանելությունը ճշտելու համար առավել կարելոր են այս և Մաշտոցյան մատենագարանի № 4355 գրչագրերը: Վերջինս նշված բարողները պարունակող հայտնի հնագույն ձեռագիրն է այսօր Գրիշն է,

1. Առևյու հեղինակի և նրա գործունեության վրա մեր ուշադրությունը հրամվել է Մատենագարանի դիրեկտոր պրոֆ. Լ. Խաչիկյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

2. Ե. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց որոց Յակոբեանց, հ. 5, Երուսաղեմ, 1960, էջ 200:

3. Ե. Պողարյանը, նկարագրելով Ղուկաս վարդապետի բարողգիրը, իր ձեռագրացուցակի երրորդ հատորի № 876 ձեռագրի ծանոթության մեջ բերում է բարողգիրի կառակցությամբ եամբայան կաթողիկոսի արտահայտած մի միտքը. «Եկաղեց մեծ մասամբ Ղուկաս վարդապետին քարողներէն են»:

Ղուկաս վարդապետը<sup>4</sup>, որը թերեւ նույնանում է Երուսաղեմի N 631 ձեռագրի Ղուկաս վարդապետի հետ:

Ձեռագիրը (N 4355) բաղկացած է երկու մասից. առաջինը գրված է XVII դարում Կյուրեղ, Երկրորդը՝ XVI դարում՝ Ղուկաս գրիշների կողմից: Վերջինին տեղ-տեղ օգնել են իր աշակերտներ Հովհաննես Սարեցին և Թորոսը: Հովհաննես Սարեցին միաժամանակ և ձեռագրի ստացողն է: Ձեռագրի քննությունը հիմք է տալիս ասելու, որ այդ երկու մասերից յուրաքանչյուրը մի առանձին բարովգիրը է, հետագայում միացված մեկ ընդհանուր կազմի մեջ: Մեզ հետարրորդը է միայն երկրորդ մասը, որտեղ ընդօրինակված են Ղուկաս վարդապետի բարովները: Քարովգրքի սկզբի խորագիրն ու բուն հիշատակարանն ընկած են, որի հետեւանքով շի պահպանվել հեղինակի և գրչի մասին որևէ տեղեկություն: Սակայն որոշ հանգամանքներ, որոնց մասին կխոսենք ստորև, հնարավորություն են ընձեռում ասելու, որ ձեռագրի գրիչ Ղուկաս վարդապետը միաժամանակ այդ դործի հեղինակն է: Հավանաբար այդ է պատճառը, որ քարովների խորագրերում հեղինակի անունը շի նշված: Գրչագրի վերջում Ղուկաս վարդապետը մի ուղերձով զիմել է ձեռագրի ստացող Հովհաննես Սարեցուն. «Ո՞վ, պատուական սրբազն ուսումնասէր և աստուածասէր եղբայր՝ տէ՛ր Յոհանէս, աշակերտ բանին կենաց, ի ժամանակի ձմբան ծաղիկ վարդ խնդրես, այժմ բարձեալ է իմաստութիւնն և սրբութիւնն աշխարհէս, և ես մարդ մեղաւոր և մտաւը կուրացեալ և տըրտմութեամբ տարակուսեալ, զրեցի զքարովս բայ խնդրուածոյ սրտի քո: Սայ շնորհաւոր քեզ եղիցի և քո հոգոյդ և քո ծնողացն հոգոյ փրկութեան պատճառ լինի, խաղաղութեամբ վայելես դա և հասնիս ի խորին ծերութիւն անփորձ և անսասան կենաւը»<sup>5</sup>:

Հիշատակարանի բովանդակությունից կարող ենք եղբակացնել, որ ձեռագրի գրիչը միաժամանակ բարովների հեղինակն է:

Պահպանված երկրորդական կարգի հիշատակարաններից որոշ հետաքրքրություն է ներկայացնում միայն Հովհաննես Սարեցու անունով գրված հիշատակարաններից մեկը.

Աստուած ոզորմի Յոհաննիսին,  
Դիրքս գրել տվել վարդայպետին,  
Քրիստոս հանգչի յիւր հոգին,  
Եւ ողորմի իւր ծնաւղին...  
Ո՞վ, պատուական սուրբ քահանայ,  
Թէ վարդապետ ես, կամ արեղայ,  
Կաթողիկոս, կամ մահրասայ,  
Որք հանդիպիք առ ի սմայ,  
Քարովս քեզ պիտենայ,  
Եւ կարդալոյ սիրտքս ցանկայ,  
Կանգնեայ ատեանն և բարովնայ,  
Եւ զքո մեղաց ազտն լուայ:  
Եղբայր, լոէ զրանս ի սմայ

<sup>4</sup> Մատենադարանի N 4355 ձեռագրի հիշատակարանում հիշված Ղուկասը զիմել է սուեկ որպես գրիչ: Տե՛ս Հ. Անայան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց թաւրիզի, Վեհննատ, 1910, էջ 5: Անայանի հետեւթյամբ նույնը կրկնել է ն. Ակինյանը իր «Մովսես Գ. Տաթևացի՝ Հայոց կաթողիկոսն և իր ժամանակը» աշխատությունում (Վեհննատ, 1936, էջ 373—375):

<sup>5</sup> Մատենադարան, ձեռ. N 4355, էջ 488r:

Եւ զքարողս կատարեայ:  
Քարոզս զանձ է, հատ չկայ,  
Անմահութեան աղբիւր է սայ...  
Եւ զստացողս բարողիս,  
Ես դժոհաննէսս Շարեցիս...<sup>6</sup>:

Ինչպիս հասկացվում է հիշատակարանից, նրա շաբադրողի կողմից է ու սույն բարողները ներկայացվում են որպես մինչ այդ անհայտ դործեր:

Չեռագրում, մեղ հետաքրքրող բարողների հետ մեկտեղ, արտագրված են նուև Գրիգոր Տաթևացու մի բանի բարողները՝ մեծ մասամբ Հովհաննես Շարեցու և Թորոսի կողմից: Թորոսը ևս հանդիսացել է բարողգրքի ստեղծման պատճեն: Նրա մասին ուսուցիչը գրում է, «Այլի ի ժամ արտասուցն լիշեցէք յաղաթս ձեր զտէր թորոս, զրոց աշակերտն, որ բանիս պատճառ եղեւ և հանապաղ բարեաց պատճառ լինի...»<sup>7</sup>:

Քարողների գրության ժամանակը անորոշ է, սակայն բարողների վերջում, Մարեցուն ուղղված գրչի խոսքերից ելնելով, կարելի է որոշ եղբակացության զալ: Սկզբի բարողներից մեկում Ղուկաս վարդապետը խնդրում է աստծուց, որ «զտէր Յոհաննէսն բարով հասուցանէ ի յաստիճան վարդապետութեան»<sup>8</sup>, իսկ վերջին բարողում արգեն խնդրում է հիշել «Յոհաննէս վարդապետին»: Պարզ է, որ բարողների տոաշին խումբը գրելիս Հովհաննեսը զեռ աշակերտել է այդ նույն Ղուկասին, իսկ ձեռագրի գրության ավարտման ժամանակ արգեն ձեռք է բերել վարդապետության աստիճան: Երուսաղեմի ձեռագրերից մեկում պահպանվել է Հովհաննես Մարեցու մի շափածո հիշատակարանը<sup>9</sup>, որտեղ նշված է, որ նա Ղուկասին աշակերտել է 1541 թվականին: Առաջնորդվելով այս տրվյալով, նկատի ունենալով ձեռագրի ծավալը, սխալված չենք լինի, եթե բարողգրքի գրության ժամանակը համարենք 1540—1550-ական թվականները:

Ինչպես նշեցինք, մեղ հետաքրքրող բարողների հեղինակի մասին տեղեկություն կա Երուսաղեմի № 631 ձեռագրի ցանկի վերնագրում: Քարողների բանակը ըստ այդ ցանկի համասար է բառասունի, որից առաջին բարողի բնարանը և սկզբնատողը համապատասխանում են Տաթևացու նույնանուն բարողի բնարանին և սկզբնատողին<sup>10</sup>: Չեռագիրը ձեռքի տակ չունենալով, անձանոթ ենք մնում այդ բարողի բովադակությանը: Հիշելով հանդերձ, որ մեր հեղինակը իր մի բանի բարողներում օգտագործել է Տաթևացու կողմից բնտրված բնարաններ, նոր մեկնություն տալով դրանց, դարձյալ չենք կարող որոշակի խոսք տաել սույն բարողի հեղինակի մասին: Միաժամանակ նկատի ունենալով, որ այն չկա ուսումնասիրվող բարողները պարունակող այլ ձեռագրերում, հակված ենք ենթագրելու, որ դա Տաթևացու գործն է:

Չեռագրում նկարագրված Երկրորդ բարողը դարձյալ մեղ անձանոթ է:

<sup>6</sup> Անդ, էջ 492ր:

<sup>7</sup> Անդ, էջ 357ր:

<sup>8</sup> Անդ, էջ 370ր:

<sup>9</sup> Ա. Ալուամելյան, Մայր ցուցակ հայ. ձեռ. Երուսաղեմի սրբոց Յակոբեանց վանքի, հ. 1, էջ 309:

<sup>10</sup> «Ա. Վեցերուղ Կիրակէին, Քառո ի բան Արք. Անտառանին, որ առև. Աւրուն կացէի զի ոչ զիսէլ, եթե տունն զայցէ...—Նախախնամութիւնն Աստուծոյ և բարերարութիւն յամենայնի յայտնի է առ իր արարածու...» (Յ. Պողարյան, անդ, էջ 200: Դր. Տաթևացի, Գիրք բարողութեան, որ կոչի Զմբան Հատ., կ. Պոլիս, 1740, էջ 411—415):

Միայն խորագրով և սկզբնատողով<sup>11</sup> դժվար է որոշել նրա հեղինակային պատկանելությունը:

Այս երկուսին հաջորդում են 35 քարոզներ (Գ—Ղ), որոնք և հետաքրքրում են մեզ: Զեռագրի վերջին՝ Ղը և Ղթ հոդվածները այլ զործեր են, իսկ Խ-ն, որով է պետք է ավարտվեր ձեռագիրը, չի պահպանվել կամ չի նկարագրվել: Այստեղ հավանաբար պետք է լիներ հեղինակի հիշատակարանը, քանի որ ցանկում դրված է հետեւյալ կիսատ նախադասությունը: «Ես բառասուներուն, յիշատակ է սուրբ խրատառու գրու...»: Ցանկում եղած համարակալունը չի համապատասխանում քարոզների հաջորդականությանը, որն ունի հետեւյալ պատկերը: Ա-Իէ, ՂԲ-ՂԴ, ՂԵ, ՂԵ-ՂԶ, ՂԲ, ՂԲ-ՂՅ.

Այժմ տեսնենք, թե ինչով են առնչվում Մաշտոցյան մատենագարանի № 4355 և երրուսաղեմի № 631 ձեռագրերը:

ա. Մատենագարանի № 4355 ձեռագրի դրչի և ենթագրյալ հեղինակի անունը բամապատասխանում է: № 631-ում նշված հեղինակի անվանը (Ղուկաս): Չմոռանանք, որ № 4355 ձեռագիրը իր գրության ժամանակաշրջանով ամենաշինն է:

բ. № 4355 ձեռագրի 37 քարոզներից 35-ը կան նաև № 631 ձեռագրում:

գ. Քարոզների հաջորդականությունը երկուսի մեջ էլ հիմնականում նույնն է:

դ. № 4355 ձեռագրի քարոզներից մեկի տողատակում դրված են քարոզից անկախ խրատական մտքեր, որոնք նույնությամբ արտագրել է № 631 ձեռագրի գրիշը:

ե. № 631 ձեռագրի գրիշ Պրոխորոն սարկավագը իր օգտագործած նախադասափառ օրինակի մասին գրում է: «Եւ զի յաւրինակս խիստ մանր և խառն էր գրած»<sup>12</sup>: Եվ, իրոք, № 4355 ձեռագրի երկրորդ մասը գրված է մանր և խառն գրչությամբ:

Երկու ձեռագրերի հիմնական նյութերի տարրերությունն այն է, որ № 4355 ձեռագրում Գր. Տաթևացու քարոզներն արտագրված են Ղուկասի քարոզների հետ խառը, մինչդեռ № 631 ձեռագրում (բացառությամբ առաջին երկու քարոզների) գրիշ է առնված միայն քարոզների վերոնշյալ խումբը: Քարոզների այս խմբավորումը կատարված է դարձյալ առաջինի հիման վրա: Հիշենք, որ № 4355 ձեռագիրը վերակազմվելու ժամանակ եղել է թերի: Հավանական է, որ այն ունեցել է նյութերի ցանկ և որոշ տեղեկություններ հեղինակների մասին, որոնցով և առաջնորդվել են հետագա բնօրինակողները:

Այս համեմատությունից հնարավոր է եղրակացնել, որ № 631 ձեռագրի գրչի համար նախադասափառ օրինակ է ծառայել № 4355 ձեռագիրը կամ սրանից արտագրված մեկ այլ օրինակ, ուստի, հավանական է գառնում, որ № 631 ձեռագրի ցանկի խորագրում եղած հեղինակի մասին տեղեկությունը ծագել է Ղուկաս վարդապետի ինքնագիր ձեռագրից: Հետեւագես այդ քարոզների հեղինակը Ղուկաս վարդապետն է<sup>13</sup>:

<sup>11</sup> «Յ. Քարոզ վասն ողարմութեան ի բան Սաղմոսին, որ առէ, նեանի որ խորի զաղատեն գտնանելին...—Գիտութիւն լիցի ձեզ եղրայրք...»:

<sup>12</sup> Ն. Պազարյան, անդ, էջ 204:

<sup>13</sup> Մաշտոցյան մատենագարանի № 2226 ձեռագիրը (XVI—XVII դդ.) տարբեր նյութերի ժողովածու է: Այն պարունակում է նաև Ղուկաս Խոնցուց բավական թվով քարոզներ: Սակայն չեռագրի հիշատակարանը կարու է լուսաբանման: Մակար գրիշը իր հիշատակարանում ձեռագրում եղած քարոզների հեղինակ է դիտում Ղուկաս Խոնցուն, միաժամանակ ձեռագրի գրության թվականը նշանակելով 1450-ը: Նա գրում է, «Այս քարոզները առացեալ է իշխուկաս Կի-

Զեռագրերի բնձեռած տվյալները հավաստում են, որ Ղուկաս վարդապետը նույն ինքը «Հոռեցին» կամ «Հաղրատեցին» է:

Երուսաղեմի N 1473 ձեռագրի հիշատականում /որը հաջորդում է Ղուկաս վարդապետի քարոզներին/ գրված է. «Յանկ (ել) և կատարեցաւ զերամաբուր բարատատանս երբներէ (իմա՝ երբներնդ) ծաղկաւք զեղ բժշկութեան ողոյ խնդրապաց շնորհուի: Ափոհալ ընդ ոլորտս տինզերաց և սուրբ ընթեալ (իմա՝ ընտրեալ) վարդապետին Ղուկաս Լոռեցուն<sup>14</sup>, ձեռամբու Ոհանէս Խոյսկոպուսիս: Աւարտեցաւ թուին ՌԶԲ, կաթողիկոսութեան տէր Մովսէսին, Համշիրաք եղրօրն Կիլիկիոյ տէր Սիմեոնին»<sup>15</sup>: Ղուկաս Լոռեցին կոչվել է նաև Հաղրատեցի: Ղուկաս վարդապետ Հաղրատեցին մատենապիտությանը հայտնի է դարձել Ղուկաս վարդապետի աշակերտ Հովհաննես Սարեցու հորեղբորորդի՝ Հովհաննեսիկ Սարեցու ժամանակագրությունից<sup>16</sup>: Այստեղ Հովհաննես Սարեցու մասին գրված է. «Եւ էր նա յաշակերտ մեծ վարդապետին Ղուկասու Հախապատեցոյ»<sup>17</sup>:

Հիմք բնդունելով այս տեղեկությունը, բանասիրության մեջ մեր Հեղինակը դիմովել է սոսկ որպես Հովհաննես Սարեցու ուսուցիչ: Նրա մասին մհծանուն հայտդեմ Հ. Աճառյանը գրում է. «Ղուկաս վարդապետ Հաղրատեցի մեծ վարժապետ, իր աշակերտն Հովհաննես Սարեցի»<sup>18</sup>:

Մ. Բարխուզարյանը, խոսելով Խոթա վանքի միարան Հովհաննես Սարեցու մասին, գրում է, որ նա եղել է «Հաղրատեցի Ղուկաս վարդապետի աշակերտը»<sup>19</sup> և միայն ալսրան:

Վ. Հակոբյանը հիշատակում է Ղուկաս Հաղրատեցուն՝ դարձյալ որպես Սարեցու ուսուցչի<sup>20</sup>:

Այս հարցում առկա մասնակի շփոթքը կամ անորոշությունը պարզելու առողջությունը միակ հոնդամանալից խոսրը պատկանում է Ն. Ակինյանին, որն առհասարակ կարելոր տեղեկություններ է Հաղորդում Ղուկաս վարդապետի մա-

զեցի սուրբ վարդապետէ՝ դիմուոր, Հեղափմաց, բայ աշխարհականաց ճանապարհու և յառաջնեղաւ զեղեցիկ պատմովինք անծանօթք վասն օրինակի ի հետ սրբոց վարդապետաց առաջեաւ և գողափարաւ առ մեղ Հասեալ:

Դրեաբ ի գայելումն մեծի բարոնապետն առանձ Սարգսի վարդապետին Մեծոփեցոյ՝ աշակերտին Գրիգորի Տաթեացոյն: Գրեցու ձեռամբ Թակամ (Մակար) գրչու Էլլիկեցոյ, թվին Է. Գ. թ. (ձև. N 2226, էջ 251): Հայունի է, որ Ղուկաս Աեղեցին ապրել է XVI—XVII դդ., ուրեմն, Հիշատակարանում կա սխալութը: Համանարար Մակար գրչին ինչ-որ տեղից ծանոթ է եւ Ղուկաս անունը, որպես քարոզների Հեղինակի, որը և նա վերադրել է Աեղեցուն Թվականի շնորհը եղած թյուրիմացությունը բարիկան պարզ բացատրված է և Խաչիկյանի կողմից «Ժիշերի հանագրերի Հիշատակարաններ» դրում: «Հիշատակարանը գրված է ահաւարակույթ Ղուկաս Աեղեցի վարդապետից (առ 1557 թ. գրեց իր յափածու տունարք) Հետո: Երկրորդ պարբերությունը բնդորինակմած է այն ձեռապրից, որի մասին բնդորինակողն ասում է՝ «Գաղութարաւ առ մեղ Հասեալ» (ձաւն Ա, էջ 650): Աւստի, նշված ձեռապրում շփոթության հետեւնը և Ղուկաս Էտեցու բարոզները վերապրիւ Ղուկաս Աեղեցուն:

14 «Լոռեցի» անձանումը պիտք է զիտել զրչի սխալ և կարգայ «Լոռեցի»:

15 Ն. Պալարյան, Մայր ցուցակ Անդամություն պրոց Յակոբեանց, Հ. 5, 1971, էջ 191:

16 «Մամուկի քահանայի Անեցոյ Հաւաքմունը ի գրոց պատմապրաց», Աւարդապատ, 1893, էջ 192: «Պատմութիւն Անաքել վարդապետի Գարիմեցոյ», Վաղարշապատ, 1893, էջ 611: Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Երևան, 1956, Համ. 2, էջ 244:

17 Պատմութիւն Առաքել վարդապետի Գարիմեցոյ, էջ 605:

18 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան Հ. 3, 1946, էջ 151:

19 Մ. Բարխուզարյանը, Պատմություն Աղվանից, Թիֆլիս, Հ. 2, 1907, էջ 59:

20 Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, էջ 253, Ժ. 25:

սին։ Հրատարակելով Գրիգոր Կեսարացու՝ Փիլիպպոս կաթողիկոսին ուղղված մի նամակը<sup>21</sup>, Ալինյանը հարցին անդրադառնում է այնտեղ հիշատակված «Ղուկաս Լոռեցի» անվան կապակցությամբ։ Գտնելով, որ այդ անունն «այլուստ անձանոթ է», նա, առանց որոշակի հիմնավորման, ենթադրություն է անում, որ «Ղուկաս Լոռեցի» և «Ղուկաս Հաղբատեցի» անունները միևնույն անձն են մատնանշում։ Ինչպես տեսանք, փաստերը հաստատում են նրա այս ենթադրությունը։

Հենվելով մատենագիտական տվյալների վրա, Ալինյանը փորձում է ներկայացնել Հաղբատեցուն և նրա աշակերտներին։ Նա Ղուկաս վարդապետի ուրծունեության շրջանը տեսնում է 1510—1555 թվականների մեջ, իսկ նրա գրական աշխատությունների մասին գրում է. «Ղուկաս վարդապետի գրական աշխատությունները մեզի շնու հասած։ Աճառյանի ցուցակն չիմացվիր, թի Ղուկաս յուր օրինակած Քարոզգիրքին մեջ զետեղած է ինքնագիր քարուներ ալ»<sup>22</sup>։

Ղուկաս Լոռեցու ծննդյան թվականի մասին առայժմ ձեռքի տակ չկատարույթ տվյալ։ Հիշատակարաններում պահպանված տեղեկությունների համաձայն Ղուկաս վարդապետը XVI դ. սկզբներին արդեն հայտնի էր որպես հմուտ մանկավարժ։ Ըստ այդմ էլ նրա ծննդյան թվականը կարելի է տեղադրել մոտավորապես XV դ. 80-ական թվականների սահմաններում։ Հայտնի չէ նաև նրա ծննդավայրը։ Արդյոք «Լոռեցի» մականունից չի՞ կարելի հետեցնել, թե նա ծնվել է հենց Լոռիում, որը մեզ հավանական է թվում։

Ղուկաս Լոռեցու հայրն է Ամիր-Ասաթը և մայրը՝ Թանկ-Աղիզը։ Մնողների անունները պահպանվել են Հռվիշաննես Սարեցու հետևյալ շափածու հիշատակարանում։

Ես աղաշեմ զհայրն երկնային,  
Զանեղ որդին և զսուրբ զհոգին,  
Որ պարզել զանձառ բարին,  
Ղուկաս անուն մեծ բարունին,  
Եւ իւր ծնողացն Ամիր-Ասաթին,  
Եւ իւր մօրն Թանկ-Աղիզին...<sup>23</sup>։

Որոշակի չի կարելի տսել, թե երբ և որտեղ է Ղուկաս վարդապետը ստացել իր կրթությունը։ Սակայն նրա քարոզներում տեղ գտած միջնադարյան հայել հույն հայտնի հեղինակներից արված քաղվածքները, գրանց մասին դատությունները, ընդգրկված հարցերը վկայում են Ղուկաս վարդապետի ունեցած բարձր գիտելիքների մասին։

Ղուկաս Լոռեցու կենսագրության վրա լույս սփռող թվակիր առ այսօր հայտնի առաջին տեղեկությունը կարապետ արեղայի հիշատակարանն է՝ 1513 թվականից։

«Ի ԶԿՐ թվին (1513) ... (և) Կարապետ սուսանուն արեղայ եւ սիրայկան եղբայրն մեր Յովհանէսն, ելաք ի գրանէն վարագա Սուրբ Նրշանին և եկայր ի ծառալութիւն տիեզերալուս վարդապետին Ղուկասի ի սուրբ էջմիածնին և զԱռակաց զիրքս դաս հրամաց, եւ աստուած զինքն խաղաղութեամբ»

21 Ն. Ալինյան, Մովսես Գ. Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, Վիեննա, 1936, էջ 373—375։

22 Անդ, էջ 375։

23 Ա. Այուրմելյան, անդ։



պահէ բնդ երկայն տօւրս, ամէն: Եւ ի Հայրապետութեան տեառն Սարգսի, որ  
բազում երախտիք ունի ի վերայ մեր քան զշափն առաւել...»<sup>24</sup>:

Չորս տարի անց, 1517 թ., Կարապետ արեդային դարձյալ տեսնում ենք  
Դուկասի մոտ ուսունելիս. «...դ Դուկաս վարդապետն... յաղղիս Հայոց, ի թվա-  
կանիս Հայոց ԶԿԶ բազում աշխատութեամբ դաս հրամեաց ի Սարբատան զա-  
ւառիս սուրբ էջմիածնի աստուածաշէն տաճարիս»<sup>25</sup>: Հիշատակարանից անմի-  
ջապես հետո մակագրված է. «Ի թվականիս Հայ(ոց) Կարապետ Տեղերցի՝ ծա-  
ռաւ: Յիսուսի Քրիստոսի», «Կարապետ Վանեցի՝ ծառաւ: Յիսուսի Քրիստոսի»:

1523 թվականին վարդապետության աստիճանի Հասած Կարապետը և  
Հովհաննեսը վերագառնում են Վան և այնտեղ Զաքարիա դրչին պատվիրում  
իրենց ուսուցչի Համար բնդօրինակել Անանիա Սանահնեցու «Մեկնութիւն ժո-  
ղոթոց Պողոսի»<sup>26</sup>, աշխատությունը Այստեղ ուշագրավ է նաև այն, որ աշա-

<sup>24</sup> Մատենադարան, ձեռ. № 2603, էջ 1ա: Հիշատակարանը տե՛ս Ն. Ակինյան, Մատենա-  
դարանի հետազոտություններ, Վիճակ, 1938, էջ 313:

<sup>25</sup> Մատենադարան, ձեռ. № 5163, էջ 280ա:

<sup>26</sup> Ն. Գովարյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբնանց, Հատ. 3, էջ 31:

կերտները ձեռագրում նկարել են իրենց ուսուցչի պատկերը (տե՛ս նկ. 1): Նկարի աջ կողմում պատկերվածը Պողոս առաքյալն է՝ կանգնած՝ զիրքը ձեռքին, ձախ կողմում՝ ծնկաշոր Ղուկաս Լուսեցին: Խորքում, վանքի պատկերի տակ, դրված է՝ «Պողոս Առաքյալ, Ղուկաս վարդապետ»:

Կարտպետի և Հովհաննեսի մատուցած ժառայության մասին Զարարիա գրիչն իր հիշատակարանում գրում է. «Արդ յանկ եղեալ կատարեցաւ սուրբ զիրքս ի բաղարս վան... ի թուականիս հայոց ԶՀԲ (1523) ի վայելումն երջանիկ և քաջ վարդապետին Ղուկասու և ի հիշատակութիւն հոգույ իւրոց, և ծնօդացն իւրոց, և ամենայն ազգականացն... Այլ զմիջնորդ սուրբ զրոյս զՅուհանէս և զԿարապետ նորբնծայ վարդապետ յիշեցէք ի Քրիստոս, որ աշխատեցան ի վերայ սուրբ զրոցս զնալով և զալով և սկզբան բերելով... Եւ ինձ Զարարիայ մեղուցեալ զծողիս»: Զեռագրում պահպանված է նաև ստացողի՝ Ղուկաս վարդապետի ինքնադիր հիշատակարանը, որը մեջբերում ենք հատվածարար. «Արդ երես անկեալ պաղատիմ Քրիստոսի մանկանցդ և զրոց աշակերտեալ անձանցդ, զտգեղութեամբ ախտի պարուրեալս ի կերպարանէ վեհին՝ զպիտակ անոն վարդապետ Ղուկաս, յաստուածաշէն և յաստուածարնակ սուրբ աթոռոյ եշմիածնէ...»<sup>27</sup>:

Եշմիածնում Ղուկաս Լուսեցու զասավանդման տարիների մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն: Նրան 1541 թվականին տեսնում ենք Սանահնում, որպես ուսուցիչ Հովհաննես Սարեցու, Թորոսի, Ղուկաս Գողթանցու, Մկրտիչ Քաջբերունու<sup>28</sup>: 1541 թվականի մի շափածու հիշատակարանում Սարեցին զրում է.

Ին Զարիար իննուն թիխս,  
Զոր զասերգեց մեծ բարունիս,  
Ի սուրբ ուխտս Սանահնիս,  
Զմարդարէս սուրբ զնսայիս,  
Վասն անպիտան Յոհանիսիս...  
Ես Յոհաննէս Սարեցի,  
Զայս սակաւ բանս զրեցի<sup>29</sup>...

Ղուկաս վարդապետին հիշատակող մեզ հայտնի վերջին թվակիր հիշատակարանը նրա աշակերտ Աթանես զրշինն է՝ գրված 1561 թվականին: Աթանեսը խնդրում է հիշել «վարդապետին իմոյ՝ մեծ բարունապետին Ղուկաս... և Յովհաննէս վարդապետին»<sup>30</sup>:

Նրա մահվան թվականի մասին նույնպես ստույգ տվյալներ չունենք: Բանասիրության մեջ այն կարծիքը կա, որ նու մահացել է 1551 թվականին, Գանձուարում: Այդ ենթադրության համար հիմք են հանդիսացել հետեւալ հանգա-

27 Անդ, էջ 34:

28 Ղուկաս Հաղբատեցին իր ինքնադիր ձեռագրում, թվարկելով աշակերտների անունները և բարեմասնությունները, խնդրում է՝ ընթերցողներին հիշել նրանց: Զեռագրի արտագրման ժամանակ աշակերտներից Ղուկաս Գողթանցին մահացած է եղել (Մատենագարան, ձեռ. № 4355, էջ 251r):

29 Ա. Սյուրմերան, անգ: Ն. Ակինյանի կարծիքով, Հովհաննես Սարեցին ուսանել է Ղուկաս վարդապետի մոտ՝ Գանձասարում: Նման փաստ մեզ հայտնի չէ:

30 Թոփեյան Հակոբ, Յուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի՝ Գաղիան, Վաղարշապատ, 1938, Ա. մաս, էջ 46: Հանձին Հովհաննես վարդապետի Աթանես զրիւր Համբանարար նկատի է ունցել Հովհաննես Սարեցուն, որը սիրով է հիշվում իր ժամանակակիցների և առանձնակի սիրով ուսուցչի՝ Ղուկաս վարդապետի կողմից:

մանքները։ Հովհաննեսիկ Սարեցին իր ժամանակագրության մեջ հիշատակել է իր հորեղբոր՝ Հովհաննես Սարեցու մահվան թվականը (1583) և նշել գերեզմանի տեղը՝ Վասակաշեն, ումն Սարդիս վարդապետի գերեզմանի կողքին։ Սեսրոբ Սմբատյանցը Գեղարքունիքում կատարած իր ճանապարհորդության ժամանակ Սոթ գավառի Վասակաշեն գյուղի եկեղեցու բնմի առաջ հայտնաբերել է երկու գերեզմանաբար՝ հետեւյալ մակարությամբ։ «Այս է հանգիստ Հովհաննես վարդապետին Ռիթ (1583)», և «Աստ հանգի մարմին Սարդիս վարդապետի Ռիթ (1551)»։ Մ. Սմբատյանցը, հենվելով վերը նշված ժամանակագրական տեղեկությունների վրա, հանգել է այն եղբակացության, որ առաջինը Հովհաննես Սարեցու գերեզմանն է<sup>31</sup>։ Շարունակելով ճանապարհը, նա Վասակաշենից ընդամենը մեկ ժամվա հեռավորության վրա դանվող Սոթ գյուղի եկեղեցու կամարակապ պատուհանի մեջ գտել է մի գերեզմանաբար՝ հետեւյալ մակարությամբ։ «Այս է հանգիստ Ղուկաս վարդապետին, Գանձասարու Առաջնորդ թվ. Ռիթ (1551)», և եղբակացը, որ «գուցէ այս Ղուկաս վարդապետն իինի՝ ուսուցիչն Հովհաննես վարդապետին Սարեցոյ...»<sup>32</sup>։

Հիմք բնգունելով այդ տեղեկությունները, Ն. Ակինյանը հանգում է նույն եղբակացության։

Ղուկաս Խոռհցու մահվան թվականի վերաբերյալ սույն հետեւյալունը թեև հնիտադրություն է, բայց անհավանական չէ։ Ինչպիս երեսում է Խոռհցու թուղած հիշատակարաններից, Սարեցին եղել է նրա սիրելի աշակերտներից մեկը։ Վերջինիս խնդրանքով նա գրել է բավական ստվարածավալ քարոզդիրը։ Ուսուցչի և աշակերտի մտերմությունը շարունակվել է նաև Սարեցուն վարդապետական աստիճան շնորհվելուց հետո։ Սարեցին, ուսումն ավարտելով, վերադարձել է իր ծննդավայրը և դարձել Դադի վանքի միաբան։ Շատ հավանական է, որ Ղուկաս Հաղբատեցին ևս, իր կյանքի վերջին շրջանում, շրաժանվելով աշակերտից, տեղափոխվել է Գանձասար և ստանձնել տեղի առաջնորդությունը։ Այստեղ էլ մահացել է 1551 թվականին, մոտ 75 տարեկան հասակում։

Ղուկաս Հաղբատեցու մասին տեղեկությունները թեև քիչ են, բայց որոշ շափով լույս են սփռում նաև նրա մանկավարժական գործունեության վրա։ Իր ժամանակին նա ճանաշված է եղել որպես հմուտ մանկավարժ։ Այդ մասին են վկայում աշակերտների կողմից նրան տրված հորջորջումները։ «մեծ բարունապետ», «տիեզերակոյս վարդապետ», «մեծ վարդապետ Հայաստանեաց» և այլն։ Շուրջ 30 տարի դասավանդելով էջմիածնում և Սանահնում, նա ջանքեր չի խնայել աշակերտների հոգենոր դաստիարակման և մտավոր դարձացման համար։ Ունեցել է բազմաթիվ աշակերտներ, որոնցից հայտնի են եղբայրներ Կարապետը և Հովհաննեսը՝ Վանից, Հովհաննես Սարեցին՝ Փաքը Սյունիքից, Ղուկասը՝ Գողթան գավառից, Մկրտիչը՝ Քաջրերունիքից, Թորոսը, Աթանասը և ուրիշներ։ Սրանցից մի քանիսը մեր մատենագրության մեջ հայտնի անուններ են։ Այսպես, Թորոս վարդապետը 1561 թվականին կիմում Զարարիա Գնունյանցին օրինակել է տվել մի Հայսմավուրը։ Իր հիշատակարանում Զարարիա Գնունյանցը խնդրում է հիշել «...հեղահոգի և աստուածանէր զբարեսէր և զգրասէր վարդապետն զՔորոս...»։ Եւ զհոգեւոր ծնօղն իւր, քաջ և զտիեղերալուր խարազնազգեաց վարդապետն զՂուկաս, զկանխիւալն ի բանէն

31 Մ. Սմբատյանց, Տեղագիր Գեղարքունիք, Վաղարշապատ, 1895, էջ 603։

32 Անդ, էջ 626։

Աստուծոյք<sup>33</sup>: Աթանասը Գևառձորում ընդօրինակել է Մաշտոց: Հովհաննես Սարեցու մասին նրա եղբորորդին գրում է. «Եթ նա յաշակերտ մեծ վարդապետին Պուկասու Հախապատեցոյ, յոյժ սրբասէր և աստուծածակը, հեղ և ազօթող, բարողող յուղափառաց և պատուղ տօնախմբութեանց, յոյժ ընթերցասէր և դրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել յինքն յիշատակ և այլ սպասք և զարդ եկեղեցոյ յոլով» և այլն<sup>34</sup>:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Պուկաս Լոռեցու դրական գործունեությունը:

Նրա ստեղծագործություններից մեկ է Հասել միայն 37 քարոզներից բաղկացած բարողգիրքը: Սակայն ձեռագիր հիշատակարանները խոսում են այն մասին, որ Պուկաս վարդապետը հեղինակել է նաև այլ զորձեր, որոնք ցարդ հայագիտությանը մնում են անհայտ:

Երուսաղեմի Ն 1428 ձեռագրի հիշատակարանում գրված է. «Ի ԶԿԶ (1517) թվին մեծ վարժապետն Հայոց՝ Պուկաս, բազում աշխատութեամբ ըզ-Մազմոսն Քաւթի ի Պենտէկոստէի տօնին սկսեալ և յաւուր տագ երեքարաթին տւարտեալ բնդ հովանեաւ աստուծաշէն տաճարիս սուրբ էջմիածնին. և նորին նազմոսի մեկնիշն ահա ի կմայ անապատն (է), զոր Հերապետ վարդապետն է ստացեալ և ներսէս վարդապետն յիշատակ եղեալ»<sup>35</sup>: Սրա առաջին մասը կտ նաև Մաշտոցյան մատենադարանի Ն 5163 ձեռագրում՝ Կարապետ արեգացի հիշատակագրության մեջ (280ր):

Այս հիշատակարանները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Պուկաս Հաղորդատեցին հեղինակ է Սաղմոսաց մեկնության:

Առավել կարևոր տեղեկություն է պահպանված Գրիգոր Կեսարացու մի նամակում: Վերջինս, խոսելով դավանաբանական հարցերի մասին, հիշատակում է նաև սովորափառ վարդապետ Պուկաս Լոռեցու մի աշխատությունը. «Շնորհիւ աստուծոյ այսպէս յայտնեալ է զայս նորաձեռութեան հանգամանս ոմն պուետիկոս ճշմարտարան Պուկաս Լոռեցի յորչորչեալ, զոր որոմանանքն [որոմքն] սերմանեալ են ի գիրս ներսիսի կամբրոնացւոյն, ի մեկնիլ ազօթիցն, որ սուտ է և խորդ, և ո՞չ ներսիսի, զոր յառաջիկայդ վեց զլխով բացահայտէ վերսասացեալ քաջ զրամատիկոսն, ուղղափառութեան վարդապետն Պուկաս, որում և մեր հետեւոցուք, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, զոր և ձեղ կամիմ նմին հետեւի, ընթերցչիք և տեղեկատիք և հետեւսչիք ճշմարտութեան»<sup>36</sup>:

Պարզվում է, ուրեմն, որ Պուկասը հեղինակ է եղել վեց զլխից բաղկացած մի մեկնության, որն առայժմ անհայտ է հայագիտությանը, բայց գոյություն է ունեցել Գր. Կեսարացու ժամանակ:

Պուկաս վարդապետը զրազվել է և ձեռագրերի ընդօրինակությամբ:

Ն. Ակինյանը բերում է Պուկաս վարդապետին ժամանակակից Զաքարիա զրչի Տարոնում ընդօրինակած Սաղմոսարանի հիշատակարանը, որտեղ Պուկաս վարդապետը հիշվում է որպես քերականական ձեռնարկի ընդօրինակող.

<sup>33</sup> Հ. Պույան. Ցուցակ հայերէն ձեռադրաց Արծնեան վարժարանի ի կարին, «Հանդէս Ամսութեայ», Վիեննա, 1962, էջ 51: Հրատարակված է նաև Ն. Ակինյանի «Մովսես Գ. Տաթեացի համբողիկոսն և իր ժամանակը» աշխատությունում, Վիեննա, 1936, էջ 374:

<sup>34</sup> Մատենադարան, ձեռ. Ն 2776, էջ 268ր: Հովհաննես Սարեցու մասին մանրամասն տե՛ս մ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Հատ. 2, էջ 244:

<sup>35</sup> Ն. Պողառյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հ. 5, էջ 98:

<sup>36</sup> Մատենադարան, ձեռ. Ն 3143, էջ 60ա:

«Գրեցաւ ի սուրբ ուխտո Սանահին... Դուկաս թարունապետ վարդապետի՝ ձեռագրչի Քերականի, որ զարինակն էառ ի Կիպրոս կղզւոյ»<sup>37</sup>:

Դուկաս վարդապետի քարոզները գրված են միջին հայերենով, զերծ են ավելորդ պերճախոսություններից: Հեղինակը քարոզներին միահյուսել է ժողովրդական զրուցներ, առակներ, ասացվածքներ, որոնք ավելի ախորժելի: Մատշելի և արժեքավոր են դարձնում դրանք: Դուկասի քարոզները մեծ մասմբ սկսվում են բնարանով և հիմնականում ունեն մեկնողական բնույթ: Մեծանուն հայագետ Հ. Տաշյանը իր ձեռագրացուցակում, նկարագրելով հիշյալ քարոզները պարունակող № 102 ձեռագիրը, անվանել է այն «Աշխարհավար քարոզգիրք», իսկ նկարագրության վերջում գրել: «Քարոզներս տրղեամբը ռաշխարհավար» են, շատ տեղ էշեր ամբողջ միջին ուսմեօրեն այլեալ զրուցներով խառն ենք»<sup>38</sup>:

Քարոզները ոչ միշտ են ընդօրինակվել միատեղ, հաջորդաբար, բայց հաճախ էլ խմբվել են և կազմել առանձին ժողովածու: Գրիշներն արտադրելիս, գրեթե միշտ, պահպանել են քարոզների նախկին (հեղինակային) հաջորդականությունը: Այսպես, Զմմառի վանքի № 205 քարոզգիրը, գրված 1582 թվականին, հաջորդաբար պարունակում է հիշյալ քարոզներից 22-ը:

Հետաքրքրական է Մատենադարանի № 2151 ձեռագիրը, որն ընդօրինակվել է Մարտիրոս երեցի կողմից Սեբաստիայում, 1587 թվականին: Այստեղ ընդօրինակված են վերոնշյալ քարոզներից միայն 26-ը, որոնց հաջորդում է անխորագիր մի ժամանակագրություն: Չեռագրի բովանդակությունը՝ բոլոր զլուխներով, համապատասխանում է Երուսաղեմի № 393 ձեռագրի բովանդակությանը: Վերջինիս գրիշն ու ստացողը զարձյալ նույն Մարտիրոս երեցն է:

Ուշադրության արժանի է Մատենադարանի № 746 ձեռագիրը, որը սխալ-մամբ վերագրված է Գրիգոր Տաթևացուն: Այստեղ քարոզների հաջորդականությունը հիմնականում համապատասխանում է Երուսաղեմի № 631 ձեռագրին, սակայն սկզբից և վերջից պակասավոր է:

Մատենադարանի № 6542 ձեռագրում, գրված 1625 թվականին, արտադրված է ընդամենը 12 քարոզ: Այս ձեռագիրն առանձնանում է քարոզների խմբագրությամբ: Գրված է երկուային, յուրաքանչյուր սյունակի տակ ամփոփված է տվյալ մասի բովանդակությունը:

Կարելի է նշել քարոզների միայն այս խումբը պարունակող բազմաթիվ այլ ձեռագրեր, բայց այսքանով արդեն պարզ է դառնում, որ դրանք դիտվել են իրեն մեկ գործ և զրվելուց անմիջապես հետո, լայն տարածում ստացել:

Ստորև տալիս ենք Դուկաս Հռոեցու քարոզների սկզբնատողերը, հիմք ընդունելով Մատենադարանի № 4355 ձեռագրում եղած դասավորությունը.

1. Յորժամ եսպան Կայեն ղԱրէլ եղբայրն իւր...
2. Յորժամ ել նոյ ի տապանէն...
3. Ամենայն զիրք աստուածային, զաստուած արդար գատաւոր...
4. Հրամայէ մարդարէն Միքիայ. Արի և զնայ աստի...
5. Նախ զիտելի է, զի որպէս մարդու հոգի է և մարմին...
6. Թէ վասն զի՞նչ պատճառի մարդարէն առակաւ խաւսի...
7. Անձն զրանական հողին ասէ...
8. Առաջին խրատ վասն մարմնաւոր կենացս է...

37 Ն. Ակինյան, Մովսես Գ. Տաթևացի հայոց կաթողիկոսն և իր ժամանակը, էջ 373:

38 Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց... ի վեհնա, 1895, էջ 374:

9. Առաջին սրբութիւն անուանի հաղորդութիւնն...
10. Զայն հրամայի, թէ ամենալն, որ առէ զեղրայր իւր...
11. Եւ նախ զայս պարտ է զիտել...
12. Այսպէս հրամային վարդապետը եկեղեցոյ...
13. Առն իմաստունք, թէ շորս բան տուանց մեր կամաց լինի...
14. Առ իմաստունն և անյաղթ փիլիսոփայն Դաւիթ...
15. Եւ պարտ է զիտել, զի հեթանոսը զաւր ծննդեան լու համարէին...
16. Եւ զիտելի է, զի այս բանս յաստուածադիր պատզամաց և ի տասն բաննեան աւրինացն է...
17. Եւ զիտելի է, զի աստուած բնութեամբ բարի է...
18. Եւ զի բատ Պղատոնի հոգին եռամասնեայ է...
19. Եւ պարտ է զիտել, զի շորս բան զաւակն ծնաւղին է պարտական և շորս բան ծնաւղն զաւակին...
20. Առաջին երկիր կոչի Հոգն և ջուրն...
21. Հրամային վարդապետը եկեղեցոյ...
22. Նախ մշտրնչենաւոր լերինք անուանին զասք հրեշտակացն...
23. Նախ պարտ է զիտել զսկիղըն տարոյն...
24. Նախ պարտ է զիտել, զի մահու աւրն և զկատարածին ծածկեալ է աստուած...
25. Յեսու որդի նաւեայ էր յաղպէ Եփրեմի...
26. Եղիոյ թիգրացի էր յաղպէ քահանայիցն...
27. Եւ զի նահապետըն յերկար ասլրէին...
28. Զի նինուէ էր բաղար մեծ յԱսորեստան...
29. Սենեքարիմ կոապաշտ թագաւոր էր տառորց ի նինվէ քաղաքէ...
30. Եւ զի յոսազ բան զզերութիւն Բարելացոցն...
31. Եւ զի թագաւորն նարուգողոնոսոր յորժամ ետես զհրաշո...
32. Յետ դարձի զերութեանն Բարելացոց...
33. Եւ զի յոսազ բան զզալուստն Քրիստոսի...
34. Որպէս յառաջին արարշութիւնն, որ ի վեց աւրն արար աստուած...
35. Անդրանիկն յաւր միաշաբաթուս...
36. Այր մի էր Ուսիտ աշխարհի...
37. Յորժամ արար աստուած զմարդն առաջին...

\* \* \*

Դուկաս կոնցու բարողները շաբագրված են Հայ ժողովրդի համար ծանր մի ժամանակաշրջանում՝ XVI դ. սկզբներին, երբ թուրք-օլարսկական հրոսակախմբերը ոտնատակ էին տալիս երկիրը։ Լցված սիրո և ցավի զզացումով օտար թշնամիների կողմից ավերված, բայրայված երկրի և տանջված ժողովրդի նկատմամբ, Հայրենասեր հեղինակն իր բարողների միջոցով փորձում է պանել երկիրն այդ վիճակից դուրս բերելու ելք։ Օտարի լծից Հայրենիքի փրկության շուրջը եղած իր տենչերը նա արտահայտել է՝ վերլուծելով Աստվածաշնչի այն պատմությունները, որոնք նյութեր են պարունակում զերության, կործանման և փրկության մասին։ Դուկաս վարդապետը գտնում է, որ երկրի ավերման պատճառ են Հանդիսանում իշխանները, մեծատունները, որոնք, ընկնելով հարստության և իշխանության ետեից, երկիրը տանում են դեպի կործանում. ավասն այսաւրիկ նկուն եղար և յերկիր կործանեցաք և եղար կոխան անմար-

մին և մարմնաւոր թշնամաց»<sup>39</sup>: Իշխանների վատ կառավարման հետևանքով երկրի ներսում տիրել է խառնաշփոթություն, հուսահատված մարդիկ կորցրել են իրենց համար ամեն ինչի նկատմամբ, դարձել «անամաւթ և անպատկառ», «ժողովուրդն... շան նման դառնան պոռնկութեամբ և արքեցողութեամբ, գողութեամբ և անիրաւութեամբ, նորա, որ այսի և զրախտ անուանին, փոխանակ բարի պտղոց՝ փուշ մեղաց բերեն յառաջ... յայնժամ այսին զողոց և զաղանաց, անհաւատից և արեանաբրու ազգաց լինի կոխան, որպէս յայժմու ժամանակիս»<sup>40</sup>, — որում է հեղինակը: Ի հակադրություն իր ժամանակաշրջանի, Ղուկաս Լոռեցին «Այս բարող և պատմութիւն է վասն դալստեանն Գաւգայ և Մագաւգայ» հետաքրքրական քարոզում շարադրում է Երուսաղեմի պատմությունից մի անցք: Բազմաթիվ թշնամիներով պաշարված քաղաքը շի զրավում՝ շնորհիվ ժողովրդի միաբանության, համերաշխության և բարոյական բարձր հատկանիշների:

Ա. Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատազրական մտքի պատմության» տառամսասիրության մեջ հայ ազատազրական մտայնությունը բացահայտող կարևոր աղբյուր է համարում քաղաքական ձգտումների հետ առնչվող տեսիլներն ու գուշակությունները<sup>41</sup>: Այդպիսի տրամադրություններ տեսնում ենք և մեր հեղինակի մոտ: Վերջինս, վերստին կենդանացնելով տեսիլային նախընթաց ավանդույթները, այն միահյուսել է պատմական իրողություն դարձած իրադարձություններին<sup>42</sup>:

Գրիգոր Լուսավորչի մի ցանկության մասին եղած զրույցի, Սահակ Պարևեսի տեսիլը և ների մասին առասպելի միջոցով Ղուկաս վարդապետը փորձում է նկարագրել XV—XVI դդ. Հայաստանի քաղաքական վիճակը:

Համաձայն Գրիգոր Լուսավորչի խնդրանքի, հայոց ազգը իր պետք է ջնջվեր մինչև ների գալուստը: Նրա խնդրանքը կատարվել է, և Աղեքսանդր Մակեդոնացու կողմից «Կասրից լեռներում» փակված «Աճուճա-Բաճուճաները» պալու են ոշնչացնելու հայերին: Արդրումում նրանք կուտք են կանգնեցնելու և հորդորելու մարդկանց՝ ընդունել կոռապաշտությունը: Ստիպելու են պատրիարքին՝ ուրանալ քրիստոնեությունը, «Եւ յորժամ ոչ ուրանայ հայրապետն, — շարունակում է հեղինակը, — սպանանեն զնայ սրով ի մէջ եկեղեցոյն և զեկեղեցին քակեն և փուլ ածեն ի վերա նոցա... և ջնջեն նորա զազս հայոց վասն հաւատոց և մնացէ սակաւ յադգէս ի յոտն վարագայ և ի ձորն Մանախոյ, որ է ի Սասունը և այնպիս կոտորելով զնան և անցանեն զգետն Եփրատ և այնշատի բազում լինին, մինչ զի ներքի ձիաւորի ձիոյն չուր ոչ ընկնի»<sup>43</sup>: Քարոզի մեջ ասվում է, որ ների թագավորությանը հաջորդելու է նրա խալտառակ կործանումը:

Լավատես հեղինակը, ինչպես տեսնում ենք, իր քարոզների միջոցով աշխատում է հորդորել ունկնդիրներին՝ պահպանելու ազատության հույսն ու համարը<sup>44</sup>:

Ղուկաս վարդապետի քարոզներում շոշափվում են և երկրի ներքին կյան-

<sup>39</sup> Մատենադարան, ձեռ. № 4355, էջ 414ա:

<sup>40</sup> Անդ, էջ 428ը:

<sup>41</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատազրական մտքի պատմության, Ա., Երևան, 1957, էջ 8:

<sup>42</sup> Մատենադարան, ձեռ. № 4355, էջ 429ա:

<sup>43</sup> Անդ, էջ 429ա:

<sup>44</sup> Անդ, էջ 352ա:

քի հարցեր, ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես և ազգագրական, կենցաղային և այլ բնույթի: Այսպես, ըստ Հեղինակի, իշխաններն իրավունք ունեին իրենց կառավարման շրջանում ազատ հրամաններ արձակելու, տուգանքներ նշանակելու: Նրանց իշխանությունից զրկելու իրավունք ուներ միայն թագավորը: Այս կապակցությամբ Հեղինակը գրում է. «Որպէս իշխանն, քանի թագաւորէն իշխանութիւն ունի, հուրմ և հրաման ունի, զով կապէ, տուգանէ, կամ արձակէ, թագաւորն զայն այլ ոչ հարցանէ: Ապայ երբ իշխանութենէն ընկնի. այլ ոչ կարէ կապել կամ արձակել»<sup>45</sup>: Իշխանները սակայն վատ են կառավարում երկիրը, նրանք պետական պաշտոնները դարձրել են առուծախի առարկա. «Կաշառը տան մաքսաւորաց նման, և զարալով տոնուն իշխանութիւնն»<sup>46</sup>, և կամ՝ «ամէն անարժան և ամազտար մարդ կարէ կաշառը տալով մաքսաւորութիւն և իշխանութիւն առնուլ»<sup>47</sup>: «Պարոն» հասկացությունն այստեղ սերտորեն կապված է շինական ունենալու հասկացության հետ: Նրա մի շարք քարոզներում հաճախ կրկնվում է հետեւյալ միտքը. «Զի՞նչ մարդոյ անուն խոճայ լինի՝ մէկ գրամ շունենայ, կամ անունն պարոն լինի՝ մէկ տուն շինական շունենայ, անօգուտ է, զատարկ անունն»<sup>48</sup>:

Քարոզներում ուշագրավ տվյալներ կան իշխանավորների կողմից մեծատուններին ու վաշխառուներին տուգանելու և նրանց գույքը բռնագրավելու մասին: Հետաքրքիր է հատկապես շահակերների-վաշխառուների վերաբերյալ Հեղինակի հազորված տեղեկությունը. «Այսպես շահակերն, այլոց թարախով լցի և աղքատաց արեամբ, և հանկարծակի տուգաննեն և փոխել տան զաղքատաց ասիւնն, քակի և ափիրի տունն, իրրե զգողին և զրկողին»<sup>49</sup>:

Ավելի հաճախ և անտեղի տուգանվում էին հասարակության ցածր խավերը: Ծանր էր հատկապես զյուղատնտեսության մեջ վարձով աշխատող մշակների վիճակը: Ամբողջ ամառը բրտնաջան աշխատելով, նրանք հաղիվ կարողանում էին հողալ իրենց օրվա ապրուստը, իսկ ձմռանը մնալով առանց աշխատանքի, «մուրացկան լինին և զուռնէ զուռն շուռ զան»<sup>50</sup>: Վարձկանների ծանր վիճակը պարզ արտահայտված է Հեղինակի՝ նրանց ուղղված մի հարցում: Մեղք համարելով կիրակի օրը մարդկանց և անասուններին աշխատեցնելը, նա ծաղրանքով հարց է տալիս. «Ի վեց աւրն աշխատեցար և հացով ոչ կշտացար, անմիտ, ի՞նչ մնաս, թէ աստուծոյ աւրինաց քակելովն տուն շինես և կամ հացով կշտանաս»<sup>51</sup>:

Ժողովրդի ծանր կացությունից օգտվում էին վաշխառուները և հսկայական շափերով բարձրացնում փոխ տված դրամի տոկոսները: Պարտատուները շկարողանալով ժամանակին վճարել պարտքը, ենթարկվում էին հալածանքների, տուգանների: Վաշխառուներին Ղուկաս վարդապետը նմանեցնում է ժողովրդի արյունը ծծող տղրուկների. «Նոյնարկս և շահակերն, — զրում է նա, — որմի զրամ փոխ տայ, մէկին տեղ տասն տոնու, աղքակի նման զաղքատաց արիւնն ծծէ...»<sup>52</sup>:

<sup>45</sup> Անդ, էջ 334թ:

<sup>46</sup> Անդ, էջ 335թ:

<sup>47</sup> Անդ:

<sup>48</sup> Անդ, էջ 278ա:

<sup>49</sup> Անդ, էջ 347թ:

<sup>50</sup> Անդ, էջ 286թ:

<sup>51</sup> Անդ, էջ 443թ:

<sup>52</sup> Անդ, էջ 347թ:

Գյուղացիների համար ինչպես միշտ, այս ժամանակաշրջանում ևս, ծանր պարտականություններից մեկն էլ հանդիսացել է կոռք, որից նրանք աշխատել են խույս տալ, փախչել: Դա երեսում է հեղինակի մի համեմատությունից, «Ճողովամբ զաղաւթքն կռո համարի և ժամատեղ զնալն տուղանք, կռոի նման որանն աւիրէ, երբ ժամանակ դժոնու՝ փախչի»<sup>53:</sup>

Հասարակության մյուս դասերի համեմատությամբ ավելի լավ վիճակում էր գտնվում Հոգեորականությունը: Ազատված լինելով՝ ծանր հարկերու պարտականությունից, իրենք էին ժողովրդից զանձում հարկեր՝ «աստուծոյ բաժին», «ազրատաց բաժին» և այլն: «Եւ զատուծոյ բաժինն,—զրում է նա, —որ ի ժողովուրդենէն առնուլ պիտի ի փառս աստուծոյ մսխել, նորա (Հոգեորականները) առնուն՝ ի փառս աշխարհի մսխեն, որք և զատապարտելոց են»<sup>54:</sup> Քարոզիչը մեղադրում է, որ նրանք «զազրատաց բաժինն, որ տայ ժողովուրդն մեղաց գին, այլազգաց տան՝ վասն մարմնաւոր փառաց և անցաւոր կենացն»<sup>55:</sup> Հեղինակը բննադատում է այն Հոգեոր պաշտոնյաններին, որոնք սփոխանակ պահելոյ և բժշկելոյ, պատառն զհաւատն Քրիստոսի բանասար գալլու: Նման, և զարին ժողովրդնանն ի ձեռաց նոցա խնդրէ աստուծո»<sup>56:</sup> Մարդկանց կեղծավորաբար խարեն ու քաղցր խոսքերի միջոցով նրանց կողովատելն արդեն այնքան բացահայտ էր զարձել, որ այդ մասին ստիպված էր խոսել նաև վարդապետ քարոզիչը: «Նոյնպէս կեղծաւորքն... ծածուկ մեղաւոր են... զի կարացեն խարել զմարդիք և փառք և պատիվ և արծաթ առնուլ, և այս մեղքս մէջ կարդաւորաց առաւել դտանի, քան ի մէջ աշխարհականաց»<sup>57:</sup>

Տեսնելով իր Հոգեոր բնկերներին ազանության, արծաթասիրության մոլոցը տառապելիս, մեր հեղինակը զարմացած հարց է տալիս: «Աշխարհականն տուն և խիզան ունի, վասն որդոց և զստերացն ժողովէ, հարկապահնացութեան, դու, կրանօոր ո՞ւմ համար ազահիս»<sup>58:</sup>

Կաշառակերությունը հսկայական շափերի էր հասել: Կաշառը էին վերցնում եկեղեցու հայրերը՝ եպիսկոպոսից սկսած մինչև քահանա: Զուկաս Հոռեցին առանձնապես «դառն և անթողելի մեղք» է համարում կաշառի միջոցով անարժաններին ձեռնազրելը: «զարծաթն առնուն և զհաւատն և զկարգն ծախինդ, պահքն և աղաւթքն, երբ ազանութեան համար մեղաւորէն կաշառը առնուս»<sup>59:</sup> Կաշառակերության միջոցով «անարժանները» տեր դառնալով եկեղեցու Հոգեոր պաշտոններին, իրենց դիրքը և եկեղեցական օրենքները օգտագործում էին ժողովրդին կողովատելու համար: Պատահական չէ, որ Զուկաս վարդապետը նրանց նմանեցնում է մաքսավորների: «Այսպէս հպարտ և փառասէր մարդիք, ավելի փառաց ցանկանան և զի անարժան են կարգին, կաշառը տան մաքսաւորաց նման և զարալով առնուն իշխանութիւնն և զեկեղեցին մաքսատուն շինեն»<sup>60:</sup> Եկեղեցու այդ կարգի պաշտոնյանների մասին վարդ-

53 Անդ. էջ 485ր:

54 Անդ. էջ 335ր:

55 Անդ:

56 Անդ. էջ 336ա:

57 Անդ. էջ 281ա:

58 Անդ. էջ 355ր:

59 Անդ. էջ 303ա:

60 Անդ. էջ 335ր:

պետների մեջ տարածված է եղել դիպուկ մի ասացվածք. «Ասեն վարդապետը, որ ունի կրաւնաւոր դանդ մի, դանդ մի շարժէ»<sup>61</sup>:

Քարոզներում ուշադրավ տեղեկություններ են պահպանված ժամանակի դատի և դատաստանի մասին: Հեղինակը պատվիրում է «մատնած և շարախօսած» մարդուն միանգամից շպատժել, այլ ոչ (30) օր երկաթով կապել<sup>62</sup> և պահել բանտում, մինչեւ մեկ կամ երկու վկաներով կպարզեն սուտն ու ճշմարտությունը: Այսինքն՝ կատարել նախնական հետաքննություն: Մարզիկ շնի կարողանում արդար դատաստան անել, «ոչարն ու բարին, զուտն ու զիրան, զարդարն և զմեղաւորն» իրարից տարրերել: Մեր քարոզիչը նրանց նմանեցնում է անշնորհք զբամափոխների: «Իրեն զտգիտ ստուաֆ, որ ոչ կարէ զուկին և զպղինձն, զանազն և զարծաթն բաժանել»<sup>63</sup>: Նա անարդար դատաստանի պատճառներ է համարում տղիտությունը, կաշառը «մեծամեծաց երկիւղ»-ը, աշուությունը: Հարստահարողների զեմ բողոքի խոսք ասողները ենթարկվում էին տուգանքների, մարմնական պատժի, դատապարտվում նույնիսկ մահվան:

Այս և հարակից հարցերի մասին քարոզներում կան ուշադրավ տվյալներ. այսպես, օրինակ. «Թէ մարդ զմարմնաւոր թագաւորի հրամանն պատռէ, սպանելու է»<sup>64</sup>: «Թէ մարդն լիրը և անմիտ լինի, որ առաջի մեծամեծաց լիրը և հակառակ խաւսի իւր լեզուն՝ զինքն սպանել, տուգանել և պատուհանել, և լեզուն իւրն մահու պատճառի»<sup>65</sup>:

Կամ «Եւ այժմ բազումք զասն սիրոյ կանանց զհաւատն ուրանան, յատուծոյ սիրոյն հեռանան, մարմնով պատժին, տուգանուին, սպանուին, ի զերեզման իջնուն դառն մահուամբ»<sup>66</sup>:

Կարենոր են նաև քարոզներում սփոված տվյալները՝ արհեստագործության, առևտրի և քաղաքացին կրանքի տարրեր երևութների մասին: Մեր քարոզիչը քաղաքարնակ ծնողներին խորհուրդ է տալիս իրենց զավակներին, յոթ տարին լրանալուց հետո, արհեստ սովորեցնել. «որ արուեստն իւրենն սարմիայ լինի և այն արուեստովն ապրի և հալալ հաց ուտէ»<sup>67</sup>: Քարոզներում որոշ տեղեկություններ կան տարրեր երկրներից ներմուծվող ապրանքների վերաբերյալ: Օրինակ, «Վաճառականն, որ զնայ ի Հնդուստան, տեղն կենալու համար չի երթալ, այլ վաճառ և առուտուր անէ, իւրենն բեռն կապէ, սոկի, արծաթ, ակն և մարդարիտ և ծանր բեռնով զառնայ ի հայրենի տունն»<sup>68</sup>, Մի առիթով նա ասում է .«Կիսրացի դաստառակաւ բերանն կու սրբէ»<sup>69</sup>. այս նախագասությունը մտածել է տալիս, որ Հայաստանում գործածվել են Կիսրոսից բերված անձնոցիկներ:

Առևտրական անբարենպաստ, վտանգներով լեցուն ճանապարհներին Ղուկաս կոռեցին հարեանցիորեն անդրագառնում է իր մի շարք քարոզներում: Բերենք զրանցից միայն մեկը. «Վաճառականն, որ բեռն ունի, սոկի, արծաթ, ակն և մարդարիտ, և զանազան զումաշ, զիշերն աւազականց երկիւղէ ոչ ննջէ, այլ ճրագն վառ պահէ և աղեղն լարէ»<sup>70</sup>:

Ուշադրավ են նաև խոջաների, սառաֆների (լումայափոխ), շահակերների (վաշխառու) մասին առկա տվյալները: Մի առիթով քարոզիչն ասում է, որ

61 Անդ:

62 Անդ, էջ 239ա:

63 Անդ, էջ 277ա:

64 Անդ, 303բ:

65 Անդ, էջ 298ա:

66 Անդ, էջ 348բ:

67 Անդ, էջ 362ա:

68 Անդ, էջ 285բ:

69 Անդ, էջ 322բ:

70 Անդ, էջ 307ա, 321ա:

առևտրականք «հարամ մտմլայ անէ, զիւրն ժ (10), բրամին ի (20) ձախէ, զըն (20) դրամին ժ (10) դրամով առնու»<sup>71</sup> և այլն։ Առուծախի ասպարհում տարածված կեղծիքի ու խարեւությունների մասին խիստ հետաքրքրական են հետեւյալ տողերը. «Թէ զեղ լինի, թէ քաղաք, թէ վանք, թէ յանապատ, ինչ տեղ որ մեծ ու փոքր կշիռ, մեծ ու փոքր լիտր, մեծ ու փոքր շափ գինոյ, կամ հացի, մեծ ու փոքր կանգուն պահեն, որ մեծովն առնուն ու փոքրովն ծախեն, զգինն ըուլոր առնուն, զհացն պակաս շափով տան, կամ թէ հետ զինոյն ջուր խառնեն, զչուրն գինու տեղ ծախեն, կամ հետ կաթին ջուր խառնեն, խապանեն, կամ հետ արծաթին պղինձ խառնեն, զրումի տեղ մսխեն»<sup>72</sup> և այլն։ Առևտրականներն ու վաշխառուները անպատիժ թալանում են ժողովրդին, Ղուկասը նրանց հավասարեցնում է զողերի, ավաղակների և զրում. «Ապա, որ յայտ է, թէ զողն և զրկողն և մաքսաւորն և շահակերն ի մի համարի են»<sup>73</sup>, «Զի մինն յայտնի դող և աւաղակ է, զուրբն կասկեալ է, կամ ի զարան մտնու, կամ ի սարերդ դմարդիք սպանէ... և մինն նստել է ի զողի բակն»<sup>74</sup>, սուտ տեսլով և սուտ հզումն ուտելով հարամ տառաւոր անէ, զմարդոյ արինն խմէ, և յայտնի զողի և աւաղակի մեղացն մասնակից և բնկերակից դառնայ»<sup>75</sup>.

Քարոզներում որոշ տեղեկություններ կան նաև զերինների մասին։ Բավականին տարածված է եղել զերինների առուծախը։ Յուրաքանչյուր պատեհ առիթով հեղինակը քարոզում է մեղքերի թողության համար զերիններ զնել և աղատ արձակել։ Տեղեկություն է հաղորդում, որ փախուստի փորձ արած զերիններին պահել են զածան պայմաններում՝ կապկապված վիճակում։

Տեղեկություններ կան վարձկանների աշխատավարձը ժամանակին շվճարելու, պակաս վճարելու կամ էլլ բնավ շվճարելու մասին։ Քարոզներից մեկում կարեսը տողեր կան վարձկան հնձողների մասին. «Յորժամ մարդ ամոան շոգ ժամանակն մարդոյ հոնձ տու անել և զվարձն կտրէ և նորա աղաղակին տու աստուած և զաստուած ի բարկութիւն շարժին... զվարձկանի վարձն թէ կտրէ մարդ, արինահեղացն և մարդասամանիցն է մասնակից, վասն որոյ պարտէ պայմանաւ զմարդն վարձել և երբ կատարի ժամանակն, զվարձն բոլոր տալ և հալալութիւն խնդրելո»<sup>76</sup>.

Բողոքի արտահայտություններ են եղել և վաշխառուների շարաշաճումների զեմ, որոնք պարտի փոխարեն «զբավ» են վերցնում պարտատերերի որդիններին և ամբողջ ունեցվածքը։ Զդիմանալով այլևս այդ հարստահարումներին, զայրացած ամբոխը զուրս է եկել նրանց զեմ։ Վախեցած վաշխառուները հաճախ ստիպված պատռել են պարտամուրհակները։ Խոսելով պարտամուրհակներ պատռելու մասին, հեղինակը զրում է. «Զայս բարիս բաղումք արարին և զեռնս առնեն աստուածամէր և ողարմած մարդիք և զաղքատաց պարտի բաշխելով զգիր պարտուցն պատռելով, չնչեն զմեղաց զիրն»<sup>77</sup>. Ղուկասը հաշտություն է քարոզում, երեան զալով մի տեսակ օրենսդրի զերով. «Որ զբեղ անարդէ, նախատէ, մեծ վնաս զործէ, տուղանել տայ, կամ շարշացությունը».

71 Անդ, էջ 345ր:

72 Անդ:

73 Անդ, էջ 347ր:

74 «Քողի բակ» — բառախաղ. այսպես առելով հեղինակը նկատի ոնք կուղակի հասկացությունը:

75 Անդ, էջ 345ա:

76 Մատենադարան, ձեռ. № 4355, էջ 239ր.

77 Անդ, էջ 313ա:

բել, երբ մեղայ դայ, թողութիւն պիտի անես»<sup>78</sup>, «Թէ մարդ քեզ վնասակար լինի և պարտական դառնայ, երբ փոշիմանի, հնագանդի և մեղայ դայ, դու հաշտիս և բո պարտականին թողութիւն անես»<sup>79</sup>: Եթե պարտականը «զառ աղքատ» չէ և կարող է «զգլուխն... վճարել, բարի է, զգլուխն առ, զշահն յաստուծոյ կառնուս», իսկ եթե «զառն աղքատ է» և չի կարող վճարել «զու մի խեղդել, թէ բեր վճարէ, կամ յորդոցն, կամ հայրենացն զբաւ բռնել...: Բեր, Քրիստոսի սիրոյն համար զի՞ն աղքատն յէն պարտուցն ապատ արայ... և զբո մեղաց զիրն պատոէ»<sup>80</sup>:

Մեր քարոզչի կարծիքով հասարակությունը բաժանվում է երկու հիմնական խմբի՝ հոգևորականների և աշխարհականների: Վերջին խումբն իր հերթին ստորաբաժանվում է «աղքատաց և մեծատանց, ծառայից և իշխանաց»<sup>81</sup>, նա այնուհետեւ փորձում է վեր հանել հասարակական բոլոր շերտերին բնորոշ արատները. Եկեղեցականներին հատուկ է հոգարտությունը, մեղավորներին՝ հուսահատությունը, մեծատուններին՝ ազահությունը, իսկ աղքատներին՝ տրտունցն ու զողությունը<sup>82</sup>:

Հասարակության այս ստորաբաժանումներն ըստ հեղինակի առաջ են զամփիս առօրյա փոխհարաբերությունների պատճառով: Մարդիկ ծնվում են հոգասար և հավասար էլ մահանում. «Որպէս Բ (2) զոնի քաղաք է աշխարհս, մի զոնովն ի մաւր արգանդէն միապէս ծնանին և զան յաշխարհս, և ի մէջ աշխարհին բաժանին՝ ոմն աղքատութեան հանդիպի և ոմն հարստութեան, ոմն ծառայութեան, մյուսն իշխանութեան, մեղաց և արգարութեան: Եւ ի միս զրունվին, որ է մահն՝ միապէս հլանէն յաշխարհէս, և ոչ կարէ իշխանութիւնն, կամ հարստութիւնն փրկել ի մահուանէ... և ոչինչ ունի աւելի մեծատունն, քան զաղքատն... և ոչ երկի փառք և իշխանութիւն նոցա, այլ այսշափ, զի անունն զրեալ է ի վերայ զերեզմանին, թէ այս անուն իշխանի և թաղաւորի է»<sup>83</sup>:

Չուկաս Լոռեցին քննադատում է թէ աշխարհիկ և թէ հոգևոր տերերին. «Թազաւորը և իշխանը... ունին զազանային բնութիւն, ուր հասանին պատառնին, զազանաց նման ուստի և մանրեն, և զմնացորդս առ ոտն կոտորեն, մարդադէմ զազան են և անասնադէմ մարդ»<sup>84</sup>: Դասակարգացին հարաբերությունների վերլուծման հարցում, երեան բերելով միջնազարյան մտածողի սահմանափակ աշխարհայացք, նա զտնում է, որ իշխանները կոչված են զորավիր կանզնելու զրկվածներին. «Զի այս է զործ թազաւորաց, զատաւորաց և իշխանաց, աղքատէլ զորքն և զաղքատն անիրաւ զրկողաց»<sup>85</sup>: Մինչդեռ հակառակն է տեղի ունենում. թագավորների և իշխանների հանցանքը երկիրն է շարժում, ավերում է աշխարհը, իսկ հոգևորականներին՝ երկինքն է շարժում<sup>86</sup>.

Չուկաս Լոռեցին օտար նվաճողների ծանր լծի տակ կեղեքվող ժողովրդի դիմադրական շարժումներից երկյուղ է կրում. «Թէ զերկու բարն յիրար տաս մէջն կրակ կու վասի և կայրի զաշխարհս»<sup>87</sup>, — զրում է նա: Արյունահեղություններից խուսափող քարողիշը, տեսնելով բնդվզող մարդկանց նկատմամբ տիրողների կողմից կիրառված զաժան հաշվեհարդարը, զտնում է, որ զժզություններն ու բողոքներն ավելորդ են. «Հետ փշին խաղաս՝ ձեսդ կու խոցէ,

78 Անդ, էջ 311ր:

79 Անդ, էջ 313ր:

80 Անդ, էջ 313ր:

81 Անդ, էջ 231ր:

82 Անդ:

83 Անդ, էջ 337ա:

84 Անդ, էջ 425ր:

85 Անդ, էջ 472ա:

86 Անդ, էջ 336ա:

87 Անդ, էջ 311ա:

Հետ կրակին խաղասա՞ծ՝ կայրիս, հետ դադա՞խին կովիս՝ գաղանակիր կլնիս...»<sup>88</sup>, Այլ ելք շգտնելով, նա քարոզում է Համբերի և Հաշտիկի. «Ճար շկայ, թէ բրիստոնեալ ես, պիտի Հաշտիս»<sup>89</sup>, քանի որ «Ճար շարեաւ ոչ յաղթի, այլ առանձ բորբոքի և մեծ վնաս և մարդասպանութիւն ծնանիս»<sup>90</sup>:

Քարոզների մեջ կան նաև Հոգեշահ խրատեր, որոնց մեջ Հատուկ տեղ են պրավում ծնողների և զավակների՝ փոխազարձ պարտականությունների մասին առկա ուշադրավ նյութերը: Որպես Հմուտ մանկավարժ, Դուկաս Լոռեցին Հոգեշաննես Երզնկացու նման դտնում է, որ երեխային փոքր Հասակում, երբ զեռ ուրովէս կակուղ մոմն զտիպն և որպէս մատղաշ ուս է տղայի Հասակն»<sup>91</sup>, պիտք է սովորեցնել «բարի ուսումն»: Այս կապակցությամբ նա վկայակոչում է, ճաղովրդական մի ասացվածք, թէ «Ուսումն մանկութեան» քանդ է ի քարի, ուսումն ծերութեան՝ զիր է ի պատղի»<sup>92</sup>: Բայտ Հեղինակի, երեխայի մեջ փոքր Հասակից պիտք է զաստիարակել աշխատասիրություն և, առաջին Հերթին, Հալալ աշխատանքով ապրելու ձգում: Մնողները պարտավոր են լավ օրինակ ծառացիւ երեխաներին: Դուկասը պատվիրում է Ճշմարտախոս լինել և սուտ երդում շտալ, ի բաց առյալ երկու զեպքի, մեկ՝ երբ սուտ խոսելով Հնարավոր է խափանել մարդասպանությունը և երկրորդ՝ երբ կարելի է ազատել մեկին զերությունից: «Թէ զերի փախչի յանարինաց, զայ ի քո տունն, սուտ ասայ, ծածկէ և մտանել, և թէ երդումն տան, երդումն կեր և զգերին թափէ», —խորհուրդ է տալիս նա»<sup>93</sup>:

Խիստ ուշադրավ են Լոռեցու Հայացքները բնտանիքի, սիրո, ամուսնության մասին: Նա զտնում է, որ նոր ստեղծվող բնտանիքը խարսխված պիտք է լինի սիրո վրա: Աղջիկ ու տղա նախ պետք է տեսնեն միմյանց, սիրեն և ապա ամուսնանան: «Այրն և կինն յառաջն սիրովն պիտի կապւին և ապա աւրհնութեան պսակովն: Սէրն է Հաստատութիւն նշանին և պսակին, և սէր ծածկէ որազմութիւն մեղաց: Թէ մէջն սէր կայ, Հալալ՝ է ամուսնութիւնն և թէ շկայ, Հարամ է»<sup>94</sup>: Ակամա ամուսնությունները պատճառ են զտնում զժրախտությունների: Մնողներն ու ազգականներն իրավունք չունեն բռնի ամուսնացնել իրենց զավակներին «ծնողացն և ազգականացն ոչ կայ թողութիւն, որ իրենց զաւակացն ակամայ պստկ զնեն, մահն և ուրկութիւն լու է, քանց զէն, որ այրն և կինն զիրար ատեն, Հարամ է կեանք նոցա և մահն զառն է, քան զիեղի»<sup>95</sup>:

Քարոզներում կտն մի շարք աղզագրական ու կինցաղազագիտական արժեքավոր տեղեկություններ: Լոռեցին Հայտնում է, օրինակ, որ փեսան Հարսիս որպես նշան նվիրելու է զինդ (ականջի օդ), որը բաշանայի կրդմից օրչնություց Հետո կախվելու է Հարսի ականջից: Դրանից Հետո Հարսն ու փեսան իրար շլին տեսնելու մինչեւ պսակի օրը:

«Քարոզ ի բան աւետարանին, որ ասէ. օհ արիք պնասցուր աստի» խորագրով քարոզի մեջ, շեղվելով իր բուն նյութից, մեր Հեղինակը շատ Հետարքքրըրական տեղեկություններ է: Հաղորդում մարդարիտ քարի գոյացման մասին և նկարագրում է: Պարսից ծոցում զտնվող Հուրմուղ քաղաքում զոհարահան շշասույզների ղժվարին աշխատանքը: «Եւ պարտ է, զիտել, — զրում է, նա, — զի

88 Անդ, էջ 311ր:

92 Անդ:

89 Անդ:

93 Անդ, էջ 298ր:

90 Անդ, էջ 288ր:

94 Անդ, էջ 301ր:

91 Անդ, էջ 318ր:

95 Անդ, 302ա:

մարդարիտն ի ցաւզոյ երկնից պոյանայ ի Շիրիմարան քաղաք, որ այժմ Հուրմուգ ասի: Կենդանի է մէջ ծովին ոստրէոս անուն՝ ի մէջ Բ սատաֆի: Եւ ի մատիս ամիսն, յորժամ ամպէ երկինքն, զայ երեսս ծովին, և բանայ զստափն, և առնու զցաւզն, և պինդ փակէ և իջանէ յատակս ծովուն և ի և (40) աւըն մարդարիտ լինի ցաւզն մէջ զստափին բարի կամաւըն և հրամանան աստուծոյ, և ապա բանայ զստափն և թափէ յատակս ծովին: Այն, որ ի հոգուտ տեղ անկանի՝ մութն մնայ, և այն, որ յաւազն անկանի՝ զործի և լուսատու և անգին մարդարիտ զառնայ: Եւ ապայ զան ի վերայ ծովին նաւով և տան զգին արեան խօրէշին (խմա ջրասոլղին), և նայ կապէ փառ զերեսաւըն և առնէ ձեթ ամանով, և յորժամ ժողովէ, և լցնէ զամանն աւազով և մարդարուով, թողու զձէթն և ելանէ չերեսս ջրին, և յորժամ տեսանեն նաւորդքն զձէթն, ի վեր քարշեն զմարդն պարանուն, որ ի մէջքն է կապած»<sup>96</sup>:

Իր մեկ այլ («Համառու պատմութիւն յեսուայ, սրդի նաւեալ») քարոզում Ղուկասն անդրադառնում է նաև ալմաստի մշակման եղանակին. «Պղինձն և պկլայեկն յիրար խառնին և զործիք կաղմնն և այծու արեամբ մխնն, և այնու տաշեն և զործեն զքարն զայն, վկայ բեղ ալմաստն, որ երկաթն ոչ յաղթէ, և արճիճով կոտրի և փշրի՝ յաւրինակ կակղութեան և խոնարհութեան»<sup>97</sup>: Այս կարգի ուշագրավ տեղեկություններ ցրված են քարոզներից շատերի մեջ:

Ղուկաս կոռեցու քարոզզրի նշանակությունը ալսքանով չի սպասվում: Այն հարուստ մի շտեմարան է ժողովրդական զրուցների և տուսալեների, տուածների ու թեավոր խոսքերի: Քարոզների մեջ բատ հարկի օղտագործված են Սողոմոնի, Ալեքսանդր Մակեդոնացու, Խիկարի, Վարդան Այզեկցու հետ կապված զրուց-առակներից հետաքրքրական նմուշներ:

Պակաս ուշագրավ չեն նաև ժողովրդական անվավեր պատմությունները Հին Կտակարանի առանձին դրվագների մասին: Անդրադառնալով նոյնի տապանի կառուցմանը, Ղուկասը մեջ է բերում հայկական մի առասպել տասպանը շինող վարպետի մասին, որը իրը ներսես անունն է կրել. «Որպէս ասեն,— զրված է քարոզզրում,— ներսէս անուն շինող տասպանին՝ շինեաց իր տեղի տուանձին, և զի ոչ էր կամք աստուծոյ ապրիլ նմա, զնորա գէզն (զնորագե՞ղն), տան, ուտեր ագուն»<sup>98</sup>: Կարենոր են նաև նոյի տապանի իջման վայրի և շրհեղեղից հետո նոյի վայրէջքի հետ կապված ժողովրդական զրուցների մասին հեղինակի գրանցած տողերը: Մեր քարոզիչը, օղտագործելով Հակոբ Մծրնեցու շուրջը հյուսված տուսպելը և հայկական ավանդույթը, փորձում է տպացուցել, որ տապանակիր լեռը Մասիսն է եղել: «Արարատու լեառն,— զրում է նա, — ուժանը զԿորպուացն ասեն, այլ ճշմարտութիւն ի Մասիս ցուցանէ, թէպէտ զոյ ի Պաղեստին և ի Գամիրս Արարատ, այլ մերս Այրարատ լսի: Ալև նշան որրոյն Յակոբայ Մծրնայ հայրապետին և զեղն Արկուսի, որ տնկեաց այզի, և քաղաքն նախիշեան, ուր ինքն հանգուցեալ կայ ի տապանի, և Մարանդ, որ է մեր մայրն՝ նեմզարայ անդ, այսորիկ վկային ճշմարիտ, որ ի մեծ Մասիս է տապանն»<sup>99</sup>:

«Վասն աշտարակին» քարոզում, խոսելով լեզուների խառնակման և աշտարակաշինության մասին, հեղինակն անդրադառնում է նաև Հայկի և Բելի տուսալելին: Խիստ ուշագրավ է, որ Ղուկաս վարդապետը վերաշարագրել է

96 Անդ, էջ 284ր:

97 Անդ, էջ 399ա:

98 Անդ, էջ 234ր:

99 Անդ, էջ 234ա:

այդ առասպելը՝ որոշ շափով շեղվելով՝ Մովսես Խորենացուց և Անանունից՝ Հարկ ենք համարում քարոզի այդ հատվածը մեջբերել ամբողջությամբ. «Եւ յորժամ քաժանեցան լեզուքն, ներրովթ, որ է Բէլ, թաղ եղ հիւսածու ի զլուխն և նստաւ թագաւոր ի Բարելոն, և կալեալ զտանուտէրսն ոչ թողուր զնալ լիւրաբանչիւր վիճակս, մինչև հնապանգեցան և ուխտ եղին և երգուան ծառալել և հարկատու լինել նմայ, և ապայ արձակեաց զնոսա: Եւ Հայկ, որդի Թորքումայ, ոչ հնապանդեցաւ, անարգեաց և նախատեաց, շուն կոշեաց զնայ և ոչ հնապանդեցաւ, այլ առեալ զորդիս ի զիշերի և եկն եհաս յերկիրն, որ կոշի Հայի ծոր Եւ նա զժարացեալ ընդ անարգանս և ինքն եմուտ ի պազ երկաթ, և մեծաւ ամբոխիւ եկն ի վերայ Հայկայ: Եւ նա լուեալ զհամբաւ զալոյ նորա և կազմեաց աղեղն պղընծի, որ է չարխի, և եղե սաստիկ պատերազմ ի մէջ նոցաւ: Եւ ոչ կարացին յազմիկ միմիանց, և ապա Հայկն հնարիւր ի փախուստ էառ և Բէլ զայր զհետ նորա հետեւակ, զի Կ(60) թիզ էր և պատեալ էր երկաթով զանձն և ձի ոչ կարէր քարշել զնայ: Եւ հրամայեաց Հայկ որդոցն կանգնել դէմ երեսին. և նա սարեաց զաղեղն շարխի և ապա յանկարծակի անզուման շարխի նետով էղարկ ի սիրտն Բէլայ և անցոյց ի թիկնայէջն և նետն զիմեալ ի քարն վշշրեցաւ, և անկեալ մսարլուրն և սատակեցաւ: Եւ որդոցն քարձեալ զմարմին ի սայլի, և տարան ի Բարելոն, և անդ թաղեցին»<sup>100</sup>:

Դուկաս Խոնեցու քարոզներում տեղ են զտել նաև 24 զրույցներ՝ քաղված մասամբ զրավոր և ավելի մեծ շափով քանավոր աղբյուրներից: Հեղինակը մատնանշում է միայն մի քանիսի սկզբնազրյուրը՝ «Հարանց վարք» և «Ալեքսանդրի պատմութիւն», իսկ մյուսների համար զրում՝ «Որպէս զրեալ է», կամ «որպէս ասեն»: Սկզելի կարեսը են այն զրույցները, որոնցում պատմվող դեպքերը կատարվել են Հայաստանի տարրեր վայրերում: Մրանց մեջ իրար են Հյեւսված իրականն ու առասպելականը: Մտորե տալիս ենք այդ զրույցների սկզբնատողների ցանկը՝ պահպանելով՝ նրանց քարոզպրում ունեցած հաջորդականությունը.

1. Այրի կին մի մեծատուն ունէր արեղայ որդի մի...
2. Ճգնաւորի մի մեռաւ եղբայրն և կինն...
3. Որպէս ասաց հրեշտակն Առաքել վարդապետին ի սուրբ էջմիածինն...
4. Վաղերիոս իշխանն պոռնիկ սատակեցաւ...
5. Յերկիրն Քաջբերունի քահանայ մի կամեցաւ կին առնուլ...
6. Յերկիրն Քաջբերունի է վանք մի, որ կոշի Մեծոփ...
7. Ճգնաւոր մի և իր պահապան հրեշտակն երթային սաղմոսելով...
8. Մանուկ մի որբ մնացել ի մօրէն...
9. Երեք ճգնաւոր ի մի յանապատ աղօթէին...
10. Ուն ճգնաւոր եկն առ Հայրն Մակար և ասաց...
11. Աղեքսանդր թագաւորն քաղում զօրօր ի ճանապարհ երթայր...
12. Ենանոս անուն ճգնաւոր և սուրբ վարդապետ(ն)ի ի Վան քաղաքի ունէր խոճայ սանահէր մի...
13. Թագաւոր մի ոչ ունէր որդի...
14. Ուն ճգնաւորի ասաց տէր, թէ առանց քո կամացդ ոչ տամ քեզ մահ...
15. Որպէս ճգնաւոր, որ հարցոց ցընկերն...
16. Հայրապետ մի զնաց ուխտ ի զերեղման առաքելոցն Պետրոսի և Պողոսի...

<sup>100</sup> Անդ, էջ 245ա:

17. Թագաւոր մի, որ իշխեր տասն թագաւորաց...
18. Վարդապետ մի զնայր յերուսաղեմ, և լմուհայ քաղաքի հանդիսեցաւ ի տուն խաւճայի միոյ...
19. Յերկիրն Քաջրերունի մեծատուն այր ունէր որդի միամօր կաշին անուն...
20. Թագաւոր մի ունէր միամօր որդի մի...
21. Յորժամ սպան դՊաւոս թագաւորն հնդկաց...
22. Եղիպտոս վանը մի ճգանորաց...
23. Որպէս այն աղքատ վարձկանն, որ խնդրեաց զվարձու իւր...
24. Որպէս այն թագաւորն, որ երկու իշխանքն իւր զառն նախանձ ունէին հետ մէկ մէկի...

Որոշ զրույցներ հեղինակը զրի է տոել իրրե ժամանակակից և ական-չալուր:

Ուշադրավ են հետեւյալ զրույցները: Քաջրերունիքից մի այրի քահանու, որն ունեցել է մահացած զուստր, ցանկացել է կրկին ամուսնանալ: Մակայն մի զիշեր երազ է տեսնում, իրը, իրեն ստիում են ամուսնանալ հանգուցյալ դուեր հետ: Երբ նա զարհուրանքով հրաժարվում է, նրան հասկացնում են, որ այսուհետեւ բոլոր կանայք քահանայի հոգեւր զուստրերն են: Արթնանալով, քահանան հրաժարվում է իր մտադրությունից<sup>101</sup>:

Վանի շրջանում է ծնունդ տոել հետեւյալ զրույցը. բերամ ենք որոշ կրծա-տումներով: «Ենանոս անուն ձգնաւոր եւ սուրբ վարդապետ ի Վան քաղաքի, ունէր խոճայ սահանչէր մի: Եւ յաւոր միում առանձին հարցոյց զվարդապետն. թէ այն, որ զրեալ է յաւետարանն, թէ զուր ազքատին ողորմութիւն տվեր, ևս մէկին Ռ(1000) զատաստանի օրն ի ձեր հոգիդ կու վճարեմ, ճշմարի՞տ քան է, թէ զարտակ ասմունք: Եւ վարդապետն ասաց, թէ աստուած ճշմարիտ, իւր քանն ճշմարիտ, զու ընդէ՞ր երկմտիս: Եւ խուճէն ասաց, թէ ես քեզ մէկ իրք մին տամ, զու կարես ինձ զիր տալ, որ Քրիստոս մէկին Շ(100) իմ հոգիս վճարէ, զհաղարն շեմ խնդրել, մէկին Ճ քաւական է: Եւ վարդապետն յանձն էաւ, և այրն այն հանեալ ի սրնդկէն և(30) զահեկան ետ ի վարդապետն, և խնդրեաց զիր, և վարդապետն զրեաց այսովէս. «Ես ենանոս վարդապետ այս անուն խաւճայէ տոի և դահեկան և զիր տվի և տէր կացի, որ զատաստանի աւրն մէկին Ճ Քրիստոս ի խաւճի հոգին վճարել, և թէ նայ շվճարել, ես յիմ քարի զործոցս վճարեմ»: Եւ տոեալ զգիրն եղ ի սնդուկն: Եւ վարդապետն առեալ զդահեկանն և տարեալ ի շուկայն, մանրեաց և քաշխեաց աղքատաց, կուրաց, կաղաց, և երիկոյն եկն առ խաւճայն: Եւ նայ հարցոյց, թէ ո՞ւր էիր զնացեալ, և վարդապետն ասաց, թէ «տարայ զրո զրամն ի Քրիստոս տվի և եկի»: Եւ այրն այն զարմացաւ և ասաց. «Եւ ո՞ւր տեսեր զՔրիստոս». և նայ ասաց թէ «աղքատն Քրիստոսի երեսփոխան է և զինչ մարդ հետ աղքատաց անէ՝ Քրիստոս իւրեանն համարի, որպէս ասաց տէրն յԱւետարանն»: Եւ յորժամ եկն աւր մահուն, կոշեաց զորդիսն իւր և ետ նոցա բազում խրատ և քարի անզարձ, և հանեալ զգիրն եղ ի մէջ ձեռացն և զմատունքն ի վերայ փակեաց և ասաց, թէ ինչ մարդ զէս զիրս յիմ ձեռացս հանէ, կամ կաղայ, զատաստանի օրն մատ յիս սեհեաս զայ: Եւ տարեալ այնովէս թաղեցին, և զեռ կենզանի էր վարդա-պետն: Եւ յայնեմ զիշերի երեսցաւ որդոց իւրոց և ասաց, թէ զնացէր բերէր զձեր կնքահայր վարդապետն, որ զայ զիր թուղթն առնու..., ևս զիմն ի Քրիս-

<sup>101</sup> Անդ, էջ 307ա:

տուէ առեալ եմ, հետ վարդապետին այլ զաւի շունիմ, զայ զիւր զիրն առնուն եւ զարմացան որդիր, և առաւոտու զնացին առ վարդապետն և պատմեցին պտեսիլն և զրանս հաւըն իւրեանց... եւ զնացեալ բացին զգերեզմանն և տեսին... զի... փայլէր զիրն իրրի զլոյս, և ամենեթեան համբուրեցին արտասաւը, և փառ հոռոն աստուծոյ»<sup>102</sup>:

Պուկաս Լոռեցին իր քարողները զարդարել է նաև թեավոր խոսքերով, պատկերավոր և ինքնատիպ համեմատություններով, որոնք ավելի աշխույժ են զարձնում խոսքը: Ազահությունն, օրինակ, նա համեմատում է ծակել կորասի հետ, որ երբեք չի լցվում, աղի ջրի հետ, որն ինչըան շատ է ըմպում մարդ՝ ավելի է ծարավում և այլն:

Սոցիալական իմաստ է թաքնված նրա հետեւալ համեմատության մեջ: «Որպէս աւձի թիւնը զմարդն սպանէ, այսպէս անօթի մաշդոյ թուրն զաւձն սպանէ, երբ թընու ի բերան աւձին»<sup>103</sup>: Նա մարդկային բարեկությունը համեմատում է օձի հետ: «Օձի ձագն բանի փոքր է, սպանել պիտի, թէ չէ կու մեծանայ, վիշտալ կու զառնայ, մարդ կուլ կուտայ»<sup>104</sup>, կամ «Զփշի արմատն կանուխ քակել պիտի, թէ չէ տասն տարի մնաց ի հողն՝ տակաւին կու հաստատի, թէ մէկ գիմաց քակես, մեկէլ զիմաց այլ նոր շիմալ կու հանէ»<sup>105</sup>, «Զինչ տան կամ զեղին կրակ տան, կանուխ բնցնել պիտի, թէ չէ զտունն ու զգէզն բոլոր կերէ»<sup>106</sup>: Որպէս եկեղեցու պաշտոնյա և վարդապետ նա քարողում է տուկալ ազգատությանը, «Որպէս խարսոցն զժանկն ըերէ և քուրէն զարձաթի ժանկն սրբէ, այսպէս զազքատութիւնն զմարդն ի մեղաց սրբէ»<sup>107</sup>: Մեղքերի մեջ թաղված մարդկանց համեմատում է ժայռի բեկորի հետ: «Որ ի զլխոց լեռանց զափիվայր հոսէ, բանի զնայ թափ առնու և հասեալ յատակն, խորտակի շարաշար»<sup>108</sup>: Նա մարդկանց գործած մեղքերի հիմնական պատճառ է համարում կինն ու զինին: Գինու վերաբերյալ բերում է ժողովրդական շափածո մի զարձվածք:

Գինին է չուր, մարդն է չաղաց,

Հենց շուռ կու զայ, զինչ խելառած»<sup>109</sup>:

Քարողների մեջ ցրված ժողովրդական առած-ասացվածքներից ուշագրավ են նաև ձեռ. № 4355-ից ստորև մեջբերված նմուշները.

Որպէս ծառն պաղովին ձանաշի և մարդն կերպարանովն (Էջ 238ա):

Անունն բահանայի, զործքն սատանայի (Էջ 238ա):

Պարզերես մեռած լսու է, բան սեերես ապրած (Էջ 288ա):

Աշաց տեսն հաստատ է, բան զլուր ականչացն (Էջ 345ա):

Տպէտ հերիմն ձարտար սպանող է (Էջ 296բ):

Հետ կաթին մտածն հետ հոգոյն կեղնի (Էջ 318բ):

Արդարագործ չես, արդարախօս լեր, և թէ յերկարէս ի նմին,

արդարագործ ևս լինիս (Էջ 414ա):

Դառն զատած, զատարկ մնացած (Էջ 244բ):

Գողի խոստովանահէր ապրանաց տէրն է (Էջ 338ա):

Պուկաս Լոռեցու քարողները հանաշողական մեծ արժեք ունեն և որպէս միջնագարյան հայ կյանքի ու կենցաղի ուսումնասիրման սկզբնաղբյուր, արժանի են ավելի հանգամանալից ուսումնասիրության:

102 Անդ, Էջ 325բ:

103 Անդ, Էջ 323ա:

104 Անդ, Էջ 311ա:

105 Անդ, Էջ 310բ:

106 Անդ, Էջ 310բ:

107 Անդ, Էջ 332ա:

108 Անդ, Էջ 432բ:

109 Անդ, Էջ 321բ:

Э. О. АРУТЮНЯН

## ЛУКАС ЛОРЕЦИ И ЕГО «КНИГА ПРОПОВЕДЕЙ»

Статья посвящена малоизвестному в научной литературе армянскому средневековому писателю и педагогу Лукасу Лореци.

Посредством филологического анализа автор статьи выяснил, что Лукас Лореци (Архимандрит Лукас, Лукас Ахпатеци) жил и творил в конце XV и в начале XVI вв.

В статье доказывается, что Лукас Лореци является автором «Книги проповедей», «Толкования Псалтири» и состоящей из шести глав книги, посвященной толкованию догматических вопросов. Из этих произведений только «Книга проповедей» сохранилась до наших дней. Древнейший ее список является автографом и хранится в Матенадаране (рукопись № 4355).

Автор статьи освещает затронутые в проповедях вопросы, касающиеся разных сторон внутренней и внешней жизни Армении. Проповеди расцениваются также как немаловажный источник для изучения народных сказаний, легенд, пословиц, жизни и быта средневековой Армении.

E. O. HAROUTUNIAN

## GHOUKAS LORETSI ET SON "SERMONNAIRE"

L'article est consacré à l'un des auteurs arméniens peu connus, écrivain et pédagogue du Moyen Age, Ghoukas Loretsi.

Une analyse philologique amène l'auteur de l'article à avancer que Ghoukas Loretsi (Archimandrite Ghoukas, Ghoukas Haghpatetsi) a vécu et travaillé à la fin du XV et au début du XVI siècles.

Il est démontré dans le présent article que Ghoukas Loretsi est l'auteur d'un „Sermonnaire“ comprenant 37 sermons, de „Commentaires au Psautier“, et de six chapitres de Commentaires relatifs aux questions dogmatiques. De ces ouvrages seul le „Sermonnaire“ est parvenu jusqu'à nos jours. Sa plus ancienne copie, actuellement conservée au Maténa-daran (ms. 4355) est autographe.

L'auteur de l'article examine les questions relatives aux divers aspects de la vie intérieure et extérieure de l'Arménie, soulevées dans le „Sermonnaire“. Ces sermons sont appréciés également comme source importante pour l'étude des légendes populaires, des proverbes, de la vie et des mœurs de l'Arménie médiévale.